ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	**<<Տեխնոլոգ>>, <<տեխնոլոգ-գեղագետ՝ խորը բժշկական պատրաստվածությամբ>>**
Դերը	Խորը բժշկական պատրաստվածությամբ տեխնոլոգ-գեղագետը, տեխնոլոգը ըստ մաշկի խնդիրների և անհրաժեշտության իրականացնում է դեմքի, ձեռքերի մաշկի և եղունգների խնամքի և մաքրման կոսմետիկ պրոցեդուրաներ, դեմքի տարբեր տեսակի դիմահարդարում, ներառյալ տարբեր գեղարվեստական կերպարների ստեղծում մատնահարդարում,
Խնդիր 1	**Պարզել դեմքի մաշկի և եղունգների կոսմետիկ խնդիրները**
Աշխատանքային գործընթացը **Կատարման չափանիշները**	Խորը բժշկական պատրաստվածությամբ տեխնոլոգ-գեղագետը, տեխնոլոգը հաճախորդի տարիքին, մաշկի և եղունգների տեսակին համապատասխան պարզում է կոսմետիկ խնդիրները և որոշում կիրառվելիք պրոցեդուրաները անհրաժեշտությունը, տեսակները, հաճախականությունը: ա.հաճախորդին ներկայացված հարցերի միջոցով ճշտորեն պարզված է կոսմետիկ խնդիրների շրջանակը, բ.ներկայացված խնդիրներին համապատասխան ճիշտ որոշված դրանց հիմնական պատճառները գ.ճիշտ է որոշված կոսմետիկ խնամքի հիմնական պրոցեդուրաները՝ուղղված ներկայացված խնդիրների լուծմանը
Խնդիր 2	**Կատարել համապատասխան կոսմետիկ պրոցեդուրաներ՝ ուղղված առկա կոսմետիկ խնդիրների լուծմանը**
Աշխատանքային գործընթացը	Խորը բժշկական պատրաստվածությամբ տեխնոլոգ-գեղագետը, տեխնոլոգը հաճախորդի տարիքին, մաշկի և եղունգների տեսակին համապատասխան կատարում է դեմքի և եղունգների մաքրման, մերսման, դրանց սնուցման հատուկ միջոցների օգտագործում:

Կատարման չափանիշները	ա.ճիշտ է կատարված դեմքը կոսմետիկ պորցեդուրաներին նախապատրաստելու աշխատանքները բ.ճիշտ է ընտրված դեմքի մաքրման եղանակը, գ.ճիշտ է ընտրված մաշկի տվյալ տեսակի համար անհրաժեշտ դիմակները, դ.ճիշտ է ընտրված դեմքի մերսման եղանակը, ե.ճիշտ է ընտրված դեմքը սնուցող քսուկի տեսակը, զ.ճիշտ է ընտրված ձեռքերի և ոտքերի եղունգները խնամքի միջոցը և եղանակը
Խնդիր 3	**Դիմահարդարման նախապատրաստական աշխատանքների իրականացում (առօրեական և հանդիսավոր, թեմատիկ և գեղարվեստական կերպարների ստեղծում)**
Աշխատանքային գործընթացը	Խորը բժշկական պատրաստվածությամբ տեխնոլոգ-գեղագետը, տեխնոլոգը Հաճախորդի առաջադրանքին համապատասխան որոշում է դիմահարդարման տեսակը՝ ընտրելով համապատասխան միջոցները՝ հաշվի առնելով հաճախորդի դեմքի կառուցվածքը, տարիքը, մաշկի տեսակը, հագուստի գույնը, սանրվածքը և միջոցառումը:
Կատարման չափանիշները	ա.ճիշտ են ընտրված դեկորտիվ կրեմ(եր)ը և դրանց երանգները. բ. Ճիշտ են ընտրված ստվերաներկերը, գ.ճիշտ է ընտրված աչքը, հոնքերը ուրվագծող մատիտները, դ.ճիշտ է ընտրված սնգույրը, ե.ճիշտ է ընտրված շրթունքը ուրվագծող մատիտը զ. ճիշտ է ընտրված շրթներկը, շրթունքների փայլը և դրա երանգը, է.ճիշտ է ընտրված դիմափոշու տեսակը և երանգը ը.ճիշտ են ընտրված դիմահարդարման լրացուցիչ միջոցները (թարթիչներ, դեմքը զարդարող փայլեր, քարեր) թ.ճիշտ են ընտրված վրձինները և օժանդակ այլ պարագաները

Խնդիր 4	Դիմահարդարման աշխատանքների իրականացում (առօրեական և հանդիսավոր)
Աշխատանքային գործընթացը Կատարման չափանիշները	Ելնելով հաճախորդի դեմքի կառուցվածքից, տարիքից, մաշկի տեսակից, հագուստի գույնից, սանրվածքից և միջոցառումից Հաճախորդի առաջադրանքին համապատասխան կատարել դիմահարդարում պահպանելով համապատասխան հերթականությունը՝ ա. ճիշտ են կատարված դիմահարդարման համար դեմքը նախապատրաստելու պորցեդուրաները բ. ճիշտ է տարածված դեկորատիվ կրեմը գ.ճիշտ է կատարված շրթունքների , հոնքերի աչքերի ուրվագծումը դ.ճիշտ է տարածված սնգույրը ե. ճիշտ է տարածված շրթներկը և փայլը զ. ճիշտ է կատարված դիմափոշու տարածումը է.ճիշտ է տարածված թարթիչների տուշը ը.ճիշտ են շտկված դեմքի առանձին թերություններ (մեծ քիթ, բարակ կամ շատ հաստ շրթունքներ, ընդգծված այտոսկրեր, շատ կլոր դեմք, փոքր աչքեր, ևն), թ.ճիշտ են քողարկված մաշկի թերությունները (վնասված, կորյակավոր, անհարթ մաշկ, ևն), ժ.ճիշտ են տեղադրված արհեստական թարթիչները, դեմքը զարդարելու քարերը, փայլերը և այլն:
Խնդիր 5	Եղունգների խնամք
Աշխատանքային գործընթացը Կատարման չափանիշները	Հաճախորդի առաջադրանքին համապատասխան և ելնելով հաճախորդի եղունգների վիճակից, իրականացնում է ձեռքի և ոտքի մատների եղունգների մաքրման, կտրման, խարտման, դրանց ձևի հաղորդման և սովորական լաքապատման աշխատանքներ ա.եղունգների վիճակին և դրանք եզրող մաշկին համապատասխան ճիշտ է ընտրված եղունգների մաքրման եղանակը (գործիքային կամ ապարատային), բ ճիշտ է կատարված եղունգների մաքրման աշխատանքները, գ. ճիշտ է կատարված եղունգները և դրանք եզրող մաշկի վարակազերծման և սնուցման

	պրոցեդուրաները, դ.ճիշտ է կտրված և խարտված ձեռքի և ոտքերի մատների եղունգները ե.ըստ եղունգների ձեռքի և ոտքերի մատների և եղունգների կառուցվածքի, ճիշտ ձև է հաղորդված դրանց, ը.եղունգների սովորական անգույն և գունավոր լաքապատումը ճիշտ է կատարված, թ.<<Ֆրանսիական մանիկյուրը>> ճիշտ է կատարված:
Խնդիր 6	Եղունգների աճեցում, գեղարվեստական զարդարում
Աշխատանքային գործընթացը **Կատարման չափանիշները**	Հաճախորդի առաջադրանքին համապատասխան և ելնելով հաճախորդի եղունգների վիճակից, իրականացնում է ձեռքի և ոտքի մատների եղունգների արհեստական աճեցման, դրանց կորեկցիայի, արհեստական եղունգների ամրացման, ինչպես նաև եղունգների գեղարվեստական և թեմատիկ լաքապատման և զարդարման աշխատանքներ ա.ճիշտ է կատարված եղունգների աճեցումը ակրիլային եղանակով, բ. ճիշտ է կատարված եղունգների աճեցումը գելային եղանակով գ.ճիշտ է կատարված արհեստական աճեցված եղունգների կորեկցիան, դ. Ճիշտ է կատարված արհեստական եղունգների ամրացման պրոցեդուրաները ե.ճիշտ է կատարված եղունգների գեղարվեստական լաքապատումը՝ կատարելով տարբեր թեմատիկ, գունային և այլ պատկերներ զ. ճիշտ է կատարված եղունգների գեղարվեստական զարդարումը՝ օգտագործելով տարբեր փայլեր, քարեր, ևն:
Խնդիր 7	**Հաճախորդներին խորհրդատվության տրամադրում**
Աշխատանքային գործընթացը	Հաճախորդներին տրամադրվում է մաշկի, եղունգների խնամքին, դիմահարդարման և եղունգների լաքապատմանը վերաբերող խորհրդատվություն

Կատարման չափանիշները	ա.հաճախորդներին տրամադրված է մաշկի խնամքը տանելու խորհրդատվություն՝ կախված մաշկի խնդիրներից, տեսակից, տարիքից, բ.հաճախորդին տրամադրված է եղունգների խնամքը տանելու խորհրդատվություն՝ կախված եղունգների վիճակից, խնդիրներից, մատների կառուցվածքից գ.Հաճախորդին տրամադրված է դիմահարդարման վերաբերյալ խորհրդատվություն՝ կախված դեմքի կառուցվածքից, տարիքից, մաշկի տեսակից, դեմքի առանձին մասերի ձևերից:
Պատասխանատվությունը	Խորը բժշկական պատրաստվածությամբ տեխնոլոգ-գեղագետը, տեխնոլոգի պարտավոր է ա.մաշկի և եղունգների խնամքի աշխատանքերի ճիշտ հերթականությամբ, լրիվությամբ, անվտանգության և սանիտարական և հիգիենիկ նորմերի պահպանման կատարման համար բ.դիմահարդարման աշխատանքները և եղունգների գեղարվեստական ու թեմատիկ լաքապատման և զարդարման աշխատանքների հերթականությամբ, լրիվությամբ, անվտանգության և սանիտարական և հիգիենիկ նորմերի պահպանման կատարման համար գ.հաճախորդներին ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	ա.հայերեն-գերազանց օտար լեզու-ռուսերեն -լավ օտար լեզու-այլ- լավ
Համակարգչային գիտելիքներ	MS Word - լավ Internet Explorer՝ լավ
Գիտելիքներ	Տնտեսագիտության հիմունքներ Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ Իրավունքի հիմունքներ

	Պատմություն Էկոլոգիայի հիմունքները Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցերը Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտությունները Համակարգչային օպերատորության հիմունքները Անվտանգություն և առաջին օգնություն Հաղորդակցություն Մասնագիտական էթիկայի հիմունքներ Նկար և գեղանկարչություն Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա Առողջ ապրելակերպի և կենսագործունեության անվտանգության հիմունքներ Մաշկի տեսակները Տեխնոլոգիական սարքավորումներ և նյութագիտություն Կոսմետոլոգիական ծառայությունների հիգիենա և սանիտարիա
Կարողություններ և հմտություններ	Կոսմետոլոգիական ծառայությունների իրականացման տեխնոլոգիա, Տարբեր տեսակի դիմահարդարում Մատնահարդարում Պեդիկյուր Հատուկ նկարի կատարման հմտություններ

Միջին մասնագիտական կրթության 2312 <<Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ>> մասնագիտության <<տեխնոլոգ>> <<տեխնոլոգ-գեղագետ՝ խորը բժշկական պատրաստվածությամբ >> որակավորման գնահատման չափանիշները

Միջին մասնագիտական կրթության 2312 <<Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ>> մասնագիտության <<տեխնոլոգ>>տեխնոլոգ-գեղագետ՝ խորը բժշկական պատրաստվածությամբ>> որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1.համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուրը 20 հարցից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95% - ին:
մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարելով ստորև նշված գործողությունները

1) Կոսմետիկ, դիմահարդարման մատնահարդարման (մանիկյուր), և պեդիկյուրի կաբինետների լրակազմման համար գործիքների, սարքերի, սարքավորումների ընտրություն և գործարկում,

2) Կոսմետիկ ծառայությունների, պրոցեդուրաների իրականացման տեխնոլոգիաների, կանոնների, մեթոդների, ձևերի, կոսմետոլոգիական ծառայությունների նախապատրաստական և ավարտական աշխատանքների իրականացում,
3) Բոլոր տեսակի մաշկի, ձեռքերի, եղունգների խնամքի իրականացում,
4) Դեկորատիվ կոսմետիկայի տեսակների ընտրություն և կիրառում՝ ինչպես արտաքինի և տարիքային կորեկցիայի, այնպես էլ զարդարման և առանձին թերությունների քողարկման նպատակով,
5) Դիմահարդարման տեխնոլոգիաների իրականացում,
6) Մատնահարդարման(մանիկյուր) տեխնոլոգիաների իրականացում,
7) Պեդիկյուրի տեխնոլոգիաների իրականացում,
8) Դիմահարդարման, գրաֆիկական ձևավորման միջոցով հաճախորդի գեղարվեստական կերպարի ստեղծում: